


83-~~76~~

Z-44

1415



2011

2003

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԵՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 154

ՎԻԼՀԷԼ՝Մ ՀԱՌԻՓ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ

Թարգմ. օր. զ. Տ.—ն.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Կ. Մարտիրոսեանցի || Типогр. К. Мартиросянца.

Орбелиановская ул., д. № 11/2.

1899.

278

Дозволено цензурою. Тифлисъ, 11 ноября 1898 г.



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՅԻՆ

Յերմանիայի հարաւային մասում մի փոքրիկ քաղաք կայ Գրինվիլդեր անունով: Քաղաքի արտաքինը այնպէս է՝ ինչպէս միւս բոլոր փոքրիկ քաղաքներինը. — քաղաքի մէջ տեղումը շուկայի փոքրիկ հրապարակն է, ուր և ջրհոր կայ. հրապարակից ոչ հեռու գտնւում են հաշտարար դատարանի և ամենից հարուստ վաճառականների տները, իսկ մնացած բնակիչներն ապրում են քաղաքի մի քանի նեղ ու լիտ ընկած փողոցներում: Այստեղ ամենքը ճանաչում են իրար. ամեն մէկը գիտէ, թէ ինչ է կատարւում իւր դրացու տանը. և նույն-իսկ երբ քահանայի, քաղաքագլխի և կամ բժշկի խոհանոցում մի նոր կերակուր է պատրաստւում ճաշի համար՝ արդէն ամբողջ քաղաքին յայտնի է լինում այդ բանը: Ճաշից յետոյ քաղաքի տիկիները ըստ սովորութեան այցելում են միմեանց և սուրճի գաւաթները առաջներին դը-

րած՝ խօսում, դատում են քաղաքի երևելի անց-
քերի մասին: Ջատ խօսելուց յետոյ, վերջապէս
ամենքը դալիս են այն եզրակացութեան, թէ
շատ հաւանական է, որ վիճակախաղի ժամա-
նակ քահանան անբարեխղճութեամբ տարաւ. որ
քաղաքագլուխը սկսել է կաշառքներ ուտել. որ
դեղագործը կաշառել է բժշկին, որպէսզի վեր-
ջինս հիւանդների համար թանգ թանգ դե-
ղեր նշանակէ: Ուրեմն կարող էք երեւակայել,
թէ որչափ անհաճոյ բան էր Գրիւնվիգէլի պէս
բարեկարգ քաղաքի բնակիչների համար այն
հանգամանքը, որ քաղաք եկաւ մի մարդ՝ որի
մասին ոչ ոք ոչինչ չգիտէր. ո՛չ գիտէին, թէ
որտեղից է եկել, ո՛չ թէ ինչի է եկել, և ոչ
էլ՝ թէ ինչո՞վ է ապրում: Ճիշտ է, քաղաքա-
գլուխը տեսել էր նրա անցագիրը և մի անգամ
բժշկի մօտ սուրճ խմելիս յայտնել էր, որ ան-
ցագիրը բոլորովին կանոնաւոր է. բայց միևնոյն
ժամանակ նկատել էր, որ ինքը այնքան էլ լաւ
բան չէ համարում մի անծանօթ մարդու իրանց
քաղաքում ապրելը, և որ նա բաւական կա-
կածելի մարդ է երևում իւր աչքին:

Քաղաքագլուխը քաղաքի առաջին մարդն
էր. հասկանալի է ուրեմն, թէ ինչո՞ւ նրա խօս-
քերից յետոյ ամենքն էլ սկսեցին նոր եկողի
վրայ ծուռ աչքով նայել: Ճիշտն ասած՝ ան-

ծանօթն իրան այնպէս էր պահում, որ աւելի
էր հաստատում իւր մասին եղած կասկածները:
Նա մի մեծ տուն էր վարձել, որը մինչև այդ
ոչ ոք չէր բռնում, այնտեղ էր փոխադրել մի սալ
լիքը զանազան օտարոտի բաներ և սկսել էր
ապրել ճգնաւորի պէս: Նա ինքն էր իւր հա-
մար կերակուր պատրաստում և բացի մի գրիւն-
վիգէլցի ծերունուց՝ ուրիշ ոչ ոքի չէր ընդունում:
Այդ ծերունին ամեն առաւօտ շուկայից նրա
համար ուտելիքի պաշարեղէն էր առնում բե-
րում, բայց երբէք չէր մտնում տան ներսի սե-
նեակները. տանտէրը նրան ընդունում էր նա-
խասենեակում, ձեռքից առնում գնած բաներն
և իսկոյն արձակում:

«Նորեկը», ինչպէս անուանում էին նրան
քաղաքում՝ ամենքի համար մի կատարեալ հա-
նելուկ էր: Ճաշից յետոյ ո՛չ ուրիշների պէս կեզլի
խաղալու էր զնում և ոչ էլ երեկոները ճաշա-
րան մտնում՝ լրագրական նորութիւնների մա-
սին զրոյց անելու: Ի զուր էին քաղաքագլուխը,
դատաւորը, բժիշկն ու քահանան նրան հեր-
թով իրանց մօտ ճաշի կամ սուրճի հրաւիրում
— նա ո՛չ մի հրաւէր չընդունեց: Հէնց այդ
պատճառով ոմանք նրան խելագար էին անուա-
նում, ոմանք հրէայ էին համարում և վերջա-

պէս ոմանք էլ պնդում էին, թէ նա կամ կախարդ է և կամ դրա նման մի բան:

Անցաւ ութ թէ տասը տարի, բայց քաղաքում նրան դեռ էլի «նորեկ» էին անուանում:

Մի անգամ Գրիւնվիգէլ եկան մի քանի ծաղրածուներ: Նրանք իրանց հետ բերել էին և սովորացրած կենդանիներ—ուղտ, արջ և մի քանի շուն ու կապիկ: Ուղտը գլուխ էր տալիս, արջը պարում էր, իսկ շներն ու կապիկները մարդու շորերով էին: Բայց այդ բոլոր կենդանիների մէջ ամենից նշանաւորը օրանդ-ուտանդ կոչուած կապիկն էր. նա համարեա մարդու հասակ ունէր, ման էր գալիս երկու ոտների վրայ և զանազան ծիծաղաշարժ բաներ էր անում: Ծաղրածուները քաղաքում շրջում էին փողոցից փողոց, ճանապարհների ու հրապարակների մէջ տեղում կանգ էին առնում և ցոյց էին տալիս իրանց ձեռնածու թիւնները և յետոյ հանդիտեսներից փող ժողովում: Մի անգամ նրանք կանգ առան և «նորեկի» տան առաջ: Հէնց որ նրանց երաժշտութեան սուր ձայները հնչեցին՝ «նորեկը» խոժոռած դէմքով եկաւ կանգնեց լուսամտի առաջ. սակայն նրա դէմքն իսկոյն պալծաւացաւ, և ի դարմանս ամենքի՛ լուսամտի առաջ նա կանգնած մնաց մինչև ներկայ-

ացման վերջը: Օրանդ-ուտանդի ծաղրալի շարժումների վրայ նա սրտանց ծիծաղում էր, և երբ ներկայացումը վերջացաւ՝ նա ծաղրածուներին մի այնպէս մեծ արծաթ փող ձգեց, որ ամբողջ քաղաքն սկսեց խօսել նրա այդպիսի առատաձեռնութեան վրայ: Հետեւեալ առաւօտը ծաղրածուները քաղաքից հեռացան: Ուղտի վրայ բարձած էին բազմաթիւ կողովներ, որոնց մէջ հանդիատ տեղաւորուած էին կապիկներն ու շները, իսկ տէրը օրանդ-ուտանդի հետ միասին գնում էին բոլորի յետևից: Բայց նրանց քաղաքից դուրս գալուց մի քանի ժամ էլ դեռ չէր անցել՝ որ «նորեկը» մարդ ուղարկեց փոստի կայարանը, ձիաներ պահանջեց և անմիջապէս ճանապարհ ընկաւ և գնաց նոյն ուղղութեամբ՝ որով ճանապարհ էին ընկել ծաղրածուները: Ամբողջ Գրիւնվիգէլը ալեկոծւում էր, որ չկարողացան իմանալ, թէ ուր գնաց օտարականը: Արդէն գիշեր էր՝ երբ նա քաղաք վերադարձաւ. սակայն այժմ նա մենակ չէր. կռքի մէջ նրա հետ նստած էր և մի ուրիշ պարոն, որի բերանն ու ականջները կապած էին մետաքսեայ թաշկինակով, իսկ գլխարկը ծածկում էր ճակատը մինչև քիթը: Քաղաքի դռան մօտ կանգնած զրադիրը իւր պարտքը համարեց զիմեկ նոր ճանապարհորդին և խնդրե՛լ

որ ցոյց տայ անցագիրը. բայց նա մի ինչ-որ անձանցօթ լեզուով խիստ կոպիտ պատասխանեց գրադրին: — Սա իմ ազգականն է, — ասաց «նորեկը», սիրալիր կերպով դիմելով պահապանին և նրա ձեռքի մէջ տահեցրեց մի քանի արծաթեայ դրամ. — նա դեռ գերմաներէն չգիտէ. մի քիչ առաջ սկսեց հայհոյել, որ մեզ այտեղ պահում են և թող չեն տալիս ազատ քաղաք մտնել:

— Օ՛, եթէ սա ձեր ողորմածութեան ազգականն է՝ պատասխանեց պահապանը, — այն ժամանակ նա կարող է ազատ անցնել առանց անցագրի էլ: Նա անկասկած ձեզ մօտ պէտք է ապրի, այնպէս չէ:

— Անշուշտ, անշուշտ, — պատասխանեց ծերունին, — և հաւանադէմն է, որ շատ երկար մնալ Գրինվիլդէլում:

Պահապանն այս բացատրութիւնից բոլորովին գոհ մնաց, իսկ «նորեկն» իւր ազգականի հետ քաղաք մտան: Սակայն քաղաքագլուխն ու ամբողջ Գրինվիլդէլը սաստիկ անբաւական մնացին պահապանից. պէտք էր որ նա ազգականի ասածներից գոնէ մի քանի խօսք մըտքումը պահէր, ասում էին նրանք. որովհետեւ դրանից կարելի կլինէր եզրակացնել, թէ ինչ ազգութեան է պատկանում «նորեկը» և նրա

ազգականը: Բայց պահապանը հաւատացնում էր, որ նրա լեզուն ոչ Ֆրանսերէն էր, ոչ իտալերէն, և աւելի անգլիերէնի էր նման, և եթէ չէ սխալուած՝ պատանի պարոնն ասաց «Goddam!» Այսպիսով՝ պահապանի շնորհիւ նորեկը հռչակուեց իբր անգլիացի, և քաղաքում խօսակցութեան միակ առարկան այս երիտասարդ անգլիացին էր:

Երիտասարդ անգլիացին նոյնպէս ոչ մի տեղ չէր դուրս գալիս: Նա ևս չէր գնում ոչ կէզլի խաղալու և ոչ էլ գարեջուր խմելու, բայց և այնպէս նա հասարակութեան խօսելու անսպառ նիւթ էր տալիս: Երիտասարդի Գրինվիլդէլ եկած օրից «նորեկի» տան մէջ այլ ևս չէր թագաւորում առաջուայ խորին լուծիւնը. ընդհակառակը, յաճախ փողոցում լսելի էին լինում սարսափելի աղաղակներ, այնպէս որ մարդկանց մեծ բազմութիւն էր հաւաքւում նրա տան առաջ՝ աղմուկի պատճառը իմանալու: Տեսնում էին, թէ ինչպէս երիտասարդ անգլիացին կարմիր ֆրակ և կանաչ վարտիք հագած, մազերը զգգաճ, սարսափելի դէմքով վազվզում էր սենեակներում և մի կամ միւս լուսամուտին էր մօտենում, իսկ նրա ձերուների քեռին, կարմիր խալթը հագին և մի մտրակ էլ ձեռին՝ դնում էր նրա յետևից:

Մեծ մասամբ նա չէր կարողանում խփել նրան. բայց դուրսը կանգնած մարդկանց այնպէս թուաց, թէ ծերունին վերջապէս բռնելէ պատանուն, որովհետեւ ներսից լսոււմ էին մտրակի հարուածների ու սուր ձիւների ձայներ: Քեռու խիստ վարմունքը զրգուեց ընդհանուր զայրուիթ: Մանաւանդ զժողհ էին կանայք. նրանք մինչև անգամ համոզեցին քաղաքացիներն որ միջամտէ: Վերջինս «նորեկին» բաւական խիստ ոճով մի նամակ գրեց, որի մէջ նախատոււմ էր ծերունուն՝ իւր ազգականի հետ տմարդի վարուելուն համար և սպառնում էր, որ եթէ նոյնանման տեսարաններ դարձեալ կրկնուին՝ այն ժամանակ նա պատանուն իւր հովանաւորութեան տակ կառնէ:

Ո՛րքան մեծ եղաւ քաղաքացիների զարմանքը. — «նորեկը» տասը տարի քաղաքում ապրելուց լետոյ՝ յանկարծ մի օր այցելութեան եկաւ նրա մօտ: Ծերունին բացատրեց, որ ստիպուած է խիստ վարուել իւր ազգականի հետ, որովհետեւ այդպէս են ցանկանում նրա ծնողները, որոնք պատանու կրթութիւնը իրան են յանձնել:

— Նա շատ խելօք և ընդունակ տղայ է, — ասում էր քեռին, — միայն զժուարութեամբ է լեզուներ սովորում, այն-ինչ ես սաստիկ ցանկանում եմ, որ նա շուտով սկսի գերմաներէն

խօսել. այն ժամանակ բաւականութիւն կունենամ նրան դուրս բերել Գրիւնվիդէլի հասարակութեան մէջ: Միայն ափսոս, որ գործը շատ դանդաղ է առաջ ընթանում, ուստի և մի-մի անգամ, թէև ակամայ՝ ստիպուած եմ լինում զիմել մտրակի օգնութեան:

Քաղաքացիները լիովին բաւականացաւ այս բացատրութիւնից, բայց և այնպէս խորհուրդ տուեց՝ ներողամիտ լինել ղէպի իւր պատանի հիւրը. իսկ երեկոյեան, զարեջուր խմելիս, քաղաքացիներն ամենքին պատմեց, որ այնպիսի կրթութեամբ ու քաղցրաբարոյ մարդ, ինչպիսին «նորեկն» է՝ ինքը շատ քիչ է տեսել:

— Զատ ցաւում եմ, աւելացրեց քաղաքացիները, որ նա հասարակութիւնից հեռու է պահում իրան. ես յոյս ունիմ, որ երբ նրա ազգականը սկսի մի փոքր գերմաներէն խօսել՝ ծերունին յաճախ կայցելէ իմ տունը:

Այս ղէպքի շնորհիւ Գրիւնվիդէլում հասարակական կարծիքը յանկարծ բոլորովին փոխուեց «նորեկի» մասին: Նա հռչակուեց մի պատուելի անձն. ամենքը սաստիկ փափագում էին մօտիկից ծանօթանալ նրա հետ, և ոչ ոք ալ ևս չէր զայրանում՝ երբ ժամանակ առ ժամանակ դատարկ տնից սարսափելի ձայներ էին լսուում:

— Ծերունին զերմաներէն լեզուի դաս է տալիս իւր աղգականին, ասում էին զրիւնվի-
զէլցիք և շարունակում իրանց ճանապարհը:

Երեք ամսից յետոյ զերմաներէն լեզուի դասերն ըստ երևոյթին դադարեցին, որովհետեւ ծերունին սկսեց զբաղուել պատանուն աւելի լայն կրթութիւն տալով, պատանի անդլիացու համար նա այժմ պարի ուսուցիչ հրաւիրեց: Այդ միջոցին Գրիւնվիգէլում ապրում էր մի ծեր Ֆրանսիացի, որ տեղացի երիտասարդներին պարի դասեր էր տալիս: Ծերունին այս Ֆրանսիացուն հրաւիրեց իւր մօտ և առաջարկեց պար սովորեցնել իւր աղգականին: Նախ քան դասերն սկսուեցին՝ ծերունին զգուշացրեց Ֆրանսիացուն ասելով, որ պատանին ամեն բանի մէջ թէև շատ ընդունակ է՝ բայց պարի վերաբերմամբ փոքր ինչ յամառ է:

Ծերունին յայտնեց և այն, որ անգլիացին առաջ պարի ուսուցիչ ունեցել է, բայց վերջինս սովորեցնելիս է եղել այնքան օտարոտի կերպով, որ այժմ մատաղահաս երիտասարդը իւր իմացած պարով անկարող է հասարակութեան մէջ դուրս գալ: Չնայելով սորան՝ աղգականը իրան երեւելի պարող է երևակայում, մինչդեռ նրա պարը ամենափոքր նմանութիւն անգամ չունի վալսի, գալօպի և կամ այստեղ ընդունուած մի

որեւէ ուրիշ պարի: Ծերունին խոստացաւ ամեն մի դասի համար մի տալէր վճարել, և պարի ուսուցիչը մեծ բաւականութեամբ համաձայնուեց պարապել նրա յամառ սանի հետ:

Փրանսիացին իբր խոստովանանք պատմում էր, որ դեռ երբէք ինքը գործ չէ ունեցել մի աչդպիսի օտարոտի աշակերտի հետ: Վերջինս բաւական բարձրահասակ, վայելչակազմ մարդ է, փոքր ինչ կարճ ոտներով, միշտ դալիս է դասին՝ մաղերը հրաշալի դանդուրներ շինած, կարմիր Ֆրակով և մաշկէ ձեռնոցներով: Խօսելիս նկատում է նրա օտարազգի արտասանութիւնը. դասի սկզբում իրան պահում է բաւական վայելուչ և քաղաքավարի, բայց յետոյ սկսում է ամենատղեղ քայլեր (պա) անել և այնպէս ցատկել, որ նրան նայելիս մարդու աչքերը բոլորովին մթնում են: Իսկ երբ ինքը ուսուցիչը կամենում է նրան դադարեցնել՝ այն ժամանակ աշակերտը բարկութիւնից հանում է ոտներից պարի կօշիկները, խփում է ծեր ուսուցչի գլխին և սկսում չորս ոտների վրայ վազվզել սենեակում: Աղմուկի միջոցին սովորաբար ներս է մտնում ծերունի քեռին, կարմիր լայն խալաթ հագած, գլխին ոսկեգոյն թղթից գլխարկ, և իսկույն գործ է դնում իւր մտրակը: Պատանի աղգականն այն ժամանակ սկսում է սաստիկ լաց լի-

ներ, բարձրանում է սեղանների վրայ, պահա-
րանների գլուխը, մինչև անգամ փորձում է նրա-
տեղ վարագույրների փայտերի վրայ և սկսում է
խօսել մի բոլորովին անհասկանալի և օտարոտի
լեզուով. բայց խալաթը հագին ծերունին այդ
բոլորին ուշադրութիւն չէ դարձնում. բռնում է
նրա ոտից, գցում յատակի վրայ և մտրակով լաւ
ծեծելուց յետոյ, պինդ կապում նրա փողպատը.
պատանին դարձեալ դառնում է հնազանդ և
քաղաքավարի: Այնուհետեւ դասը շարունակւում
է առանց ընդհատումների:

Բայց երբ վերջապէս պարի ուսուցիչը սովորեցրեց իւր աշակերտին պարել երաժշտութեան ներդաշնակութեամբ՝ ազգականը, կարծես թէ, վերածնուեց:

Վարձեցին քաղաքային երաժիշտներից մէկին. նա դասի միջոցին նստում էր դատարկ տան դահլիճի սեղանի վրայ. ծերունի ուսուցիչը ներկայանում էր իբր տիկին—նորեկը ստիպում էր նրան մետաքսեայ շրջագգեստ հագնել և վրան էլ հնդկական շալ գցել. պատանի ազգականը մօտենում էր նորան վալ'ս պարելու, և սկսում էին պտտուել: Դժբախտաբար երիտասարդ անգլիացին երբէք պարելուց չէր յոգնում, նա մինչև անգամ մի մոլի պարող էր: Նա ուսուցչին բաց չէր թողնում իւր երկար ձեռների մի-

ջից, չնայելով խեղճի յոգեցներին ու տնքոց-
ներին, և այն աստիճան պտտացնում էր, որ
կամ նա սաստիկ յոգնածութիւնից գետին էր փռ-
վում և կամ քաղաքային երաժշտի ձեռքը հրա-
ժարւում էր այլ ևս ջութակի աղեղը (СМЫЧКЪ)
բռնել: Խեղճ Ֆրանսիացին բոլորովին ոչժից ըն-
կնում էր, սակայն այն տալէրը, որ ճշտու-
թեամբ ստանում էր ամեն օր դասից յետոյ, և
այն լաւ զինին, որով ծերունին հիւրասիրում
էր նրան՝ ստիպում էին նրան մոռանալ կրած
բոլոր տանջանքները, և նա նորից գնում էր
դասի, թէև դեռ նախընթաց օրը ինքն իրան
խօսք էր տուած լինում՝ երբէք այլ ևս չերևալ
դատարկ տան մէջ: Սակայն գրիւնվիզիցիք
բոլորովին գործին այլ կերպ էին վերաբերում. —
նրանք երիտասարդ անգլիացու մէջ մեծ ընդու-
նակութիւններ էին տեսնում, այնպիսի ընդու-
նակութիւններ, որոնց շնորհիւ նա յաջողու-
թիւն կունենայ հասարակութեան մէջ, իսկ
քաղաքի կանայք, տղամարդկանց պակասութեան
պատճառով, նախօրօք ուրախանում էին, որ
առաջիկայ ձմեռը մի այնպիսի ճարպիկ պարող
պիտի ունենան:

Մի գեղեցիկ առաւօտ խոհարար կանայք
շուկայից տուն վերադառնալիս, մի դարմանալի
նորութիւն հաղորդեցին իրանց տիկիներին:

Դատարկ տան առաջ հրաշալի գեղեցիկ ձիեր լծած մի կառք կանգնեց. կառքի դռանը կանգնած էր մի սպասաւոր, թանկագին լիվրէյ հագին: Զուտով դատարկ տան դռները բացուեցան, այնտեղից դուրս եկան շքեղ հագնուած պարոններ, նրանցից մէկը ծերունի «նորեկն» էր, իսկ միւսը շատ հաւանական է նրա ազգականը լինէր, նա որ այնքան դժուարութեամբ կարողացաւ գերմաներէն լեզուն սովորել և որ պարում է այնչափ մոլի կերպով: Երբ երկուսն էլ կառք նստեցին՝ ծառան ետեւից ցատկեց աթոռակի վրայ և կառքը սլացաւ—կարող էք ձեզ երեւակայել—ուղիղ դէպի քաղաքագլխի տունը:

Այնայք, այս բանը լսելուն պէս՝ շտապով լետ արին իրանց գոգնոցները, հանեցին զլիսները ոչ-բոլորովին մաքուր փաթթոցները և հազան իրանց նոր շորերը:

—Ո՛չ մի կասկած չը կայ,—ասում էին նրանք՝ տանեցոց, որ նոյնպէս շփոթուած այս ու այն կողմն էին ընկնում, վազվզում՝ ընդունարանը կարգի բերելու համար.— ոչ մի կասկած չկայ, որ «նորեկն» այժմ սկսել է իւր ազգականի հետ միասին այցելութիւններ անել: Այդ տխմար ծերի դուռը մինչև հիմայ այս ամբողջ տասը տարուայ ընթացքում չմտածեց ծանօթանալ քաղաքացիների հետ. սակայն նորան պէտք է ներել.

դրա պատճառը նրա ազգականի եղբոր հետն էն՝ վերջինս մի հիանալի երիտասարդ էր:

Այսպէս էին խօսում գրիւնվիգէյը և նայք և միևնոյն ժամանակ լիշեցնում էին իրանց որդիներին և աղջիկներին, որ նրանք իրանց լաւ պահէն հիւրերի եկած ժամանակ, ուղիղ նստեն և ընտիր ոճեր գործածեն:

Քաղաքի նրբամիտ կանայք սխալուած չէին. լիրաւի, ծերունի «նորեկը» հերթով շրջեց բոլորի տները և իւր ազգականին ներկայացրեց Դրիւնվիգէյի հասարակութեան:

Հիւրերը ամեն տեղ շատ լաւ տպաւորութիւն թողին: Ամենքն ևս ափսոսում էին, որ մինչև այժմ առիթ չեն ունեցել մի այսպիսի հաճելի ծանօթութիւն ունենալու: Ծերունին շատ պատկառելի և խելօք մարդ ճանաչուեց, և թէև շարունակ կամացուկ ժպտում էր, այնպէս որ իսկապէս չէր խմացում, նա լուրջ է խօսում, թէ կատակում է՝ բաց շատ խելացի կերպով էր խօսում եղանակի, տեղի, ամարալին գուարճութիւնների մասին, այնպէս որ ամենքն էլ հիացած մնացին:

Իսկ ազգականը... նա կատարելապէս հիացրեց և առանց բացառութեան տիրեց ամենքի սրտերին: Ճիշտն ասած՝ նրա արտաքինը շատ հեռու էր գեղեցիկ լինելուց, և նրան գեղեցիկ

չէր կարելի անուանել. դէմքի ստորին մասը, մանաւանդ ներքին ծնօտը, չափազանց դուրս պրծած էր, երեսի գոյնը սաստիկ մուգ, և բացի դրանից, նա երբեմն դէմքի վրայ զարմանալի ծամաճուլթիւններ էր անում, աչքերը փակում էր, ատամները բաց անում և ալչն: Քայց և ալնալէս՝ ամենքն ևս կարծում էին, թէ նա մի անսովոր հետաքրքրական դէմք ունի: Չէր կարելի մի աւելի շարժուն և ճարպիկ մարդ երեւակայել, ինչպիսին երիտասարդ անգլիացին էր: Նրա հագուստը թէև վրան լաւ չէր նստում, բայց շատ լաւ սաղում էր: Նա վերին աստիճանի աշխուժ էր և ամենքի տանը իրան անչափ ազատ էր պահում. պառկում էր բազմոցի վրայ, նստում բաղկաթուռի մէջ և երկարումէկ ձգում: Եւ ալն, ինչ որ մի ուրիշ երիտասարդի համար անվայել ու կոպիտ բան կը նկատուէր՝ երիտասարդ անգլիացու համար եղակի մի ձև էր համարւում: «Դէ, չէ որ նա անգլիացի է, ասում էին գրիւնվիզիցիք, իսկ անգլիացիք ամենքն էլ այդպէս են: Անգլիացին կարող է պառկել և մինչև անգամ քնել ալն միջոցին՝ երբ տասը տիկին ներկայ են և տեղ չունին նստելու: Այդպիսի դէպքերում նրանցից չպէտք է վերաւորուել»:

Քեռու վերաբերութեամբ երիտասարդը ի-

րան շատ մեծ ակնաճուլթեամբ էր պահում, որովհետև հէնց որ նա սկսում էր սենեակում ցատկել և կամ պահանջ էր զգում ոտները բաղկաթուռի վրայ դնելու՝ ծերունին իսկոյն նրա վրայ մի խիստ հայեացք էր գցում և նրան կարգի էր հրաւիրում: Վերջապէս ինչպէս կարելի է վերաւորուել մի դեռահաս պատանուց՝ երբ քեռին ինքը ամեն տեղ ասում էր տան տիկնոջ.

— Իմ ազգականը դեռ մի փոքր վալրենի և անտաշ է, բայց ես շատ բան եմ սպասում հասարակութիւնից. հասարակութիւնը նրան կը կրթէ և մանաւանդ ինձ կօգնէ սիրալիւր կերպով՝ նրան կրթելիս:

Այսպէս ուրեմն ազգականը վերջապէս հասարակութեան մէջ մտաւ: Ամբողջ այդ օրը և մինչև անգամ հետևեալ մի քանի օրերը Գրիւնվիզիւն միակ խօսակցութիւնը այդ դէպքն էր: Քայց ծերունին միայն սրանով չբաւականացաւ. կարծես թէ նա ինքն էլ այս անցքից լետոյ բոլորովին ուրիշ մարդ դարձաւ, — ալնքան խիստ կերպով փոխեց նա իւր առաջուայ կեանքի եղանակը: Ամեն օր ճաշից լետոյ նա իւր ազգականի հետ գնում էր սարի վրայի դարեջրատունը, ուր Գրիւնվիզիւն նշանաւոր քաղաքացիք հաւաքւում էին դարեջուր խմելու և զուարճանում կէզլի խաղալով: Ծերունու ազգականը երևելի

խաղապող դուրս եկաւ. նա երբէք հինգ կամ վեց կէզլից պակաս չէր վէր գցում: Բայց երբեմն նա մի տեսակ օտարոտի տրամադրութեան մէջ էր ընկնում. սկսում էր ամեն տեսակ լիմարութիւններ անել, կամ յանկարծ ինքն էլ գունդի հետ միասին սկսում էր գլորուել կէզէլքանի վրայով, կամ երբ ութ կէզլի միանգամից էր վէր գցում՝ կանգում էր գլխի վրայ, ոտները վեր բարձրացնում և ապա սկսում գլորուել: Պատահում էր, որ երբ այդպէս գլորուելիս անցնում էր նա կառքի մօտով՝ ցատկում էր յանկարծ կառքը, նստում կառապանի տեղում և սկսում զանազան ծամառճութիւններ անել, մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ նա դարձեալ գլորուելով վերադառնում էր զարեջրատուն:

Այսպիսի դէպքերում քեռին սովորաբար ներողութիւն էր խնդրում քաղաքագլխից և բոլոր միւս ներկայ եղողներից իւր ազգականի անկրթութեան համար:

Բայց նրանք միայն ծիծաղում էին նրա արարքների վրայ, այդ վերագրելով նրա ջահելութեան, և հաւատացնում էին որ իրանք էլ այդ հասակում նոյնպիսի չարաճճիներ էին՝ ինչպիսին է անգլիացին: Եւ «չարաճճին», ինչպէս անուանում էին նրան՝ մնում էր ընդհանուրի սիրելին:

Սակայն լինում էին նաև դէպքեր՝ երբ նրա վրայ լաւ բարկանում էին, բայց և այնպէս ոչ ոք չէր համարձակում նրա մասին վատ խօսք ասել, որովհետեւ երկտասարդ անգլիացու խելքն ու կրթութիւնը ամենքին յայտնի էին: Այսպէս, օրինակ, երբ յաճախ երեկոները քեռին տանում էր նրան իւր հետ «Պսկեղնիկ» կոչուած հիւրանոցը՝ անգլիացին, չնայելով որ դեռ բոլորովին պատանի էր՝ բայց իրան ճիշտ այնպէս էր պահում՝ ինչպէս հասակաւորները: Նա էլ իւր համար մի դաւաթ զարեջուր էր պահանջում, մեծ-մեծ ակնոցներ դնում քթին, զրպանից հանում երկար չիբուխը, վառում և սկսում ծխել ու ամենքից աւելի ծուխ անել: Իսկ երբ խօսակցութիւնն անցնում էր լրագրական նորութիւնների, օրինակ, երբ վիճում էին, պատերազմ կը լինի թէ ոչ, և բժիշկն ու քաղաքագլուխը յայտնում էին իրանց կարծիքները, իսկ միւսները բարձրաձայն արտայայտում էին իրանց զարմանքը նրանց երկուսի խելքի ու նրբամտութեան վրայ՝ յանկարծ «նորեկի» պատանի ազգականի խելքին փչում էր մի բոլորովին հակառակ կարծիք յայտնել:

Նա ձեռքով, որից երբէք ձեռնոցը չէր հանում՝ պինդ խփում էր սեղանին և առանց քաշուելու հասկացնում քաղաքագլխին և բը-

Ժշկին, որ այդ բաներում նրանց ինքը ոչինչ չէ կտրում և որ ինքը գործին լաւ տեղեակ է աւելի ճիշտ աղբիւրներից: Յետոյ նա կոտորտուած գերմաներէն լեզուով արտայայտում էր իւր սեփական կարծիքը, և ամենքը, ի մեծ ցաւ քաղաքագլխի, նրա կարծիքը համարում էին հիանալի:

— 2^է որ նա իբր անգլիացի այդ բաներին աւելի լաւ ծանօթ պէտք է լինի, ասում էին նրանք:

Եւ երբ բժիշկն ու քաղաքագլուխը թաղցնելով իրանց զայրութիւն, նստում էին շախմատ խաղալու, ազգականը, կարծես բոլորովին անպարտ, մեծ-մեծ ակնոցները քթին դրած, մօտենում էր խաղացողներին և նայում նրանց խաղին, յանդիմանում էր քաղաքագլխին, որ խաղալ չգիտէ, և ցոյց էր տալիս բժշկին, թէ նա ինչպէս պէտք է քաջ անէ: Այս բանը մանաւանդ երկուսին էլ ամենից աւելի էր բարկացնում: Իսկ երբ քաղաքագլուխը, արդէն բարկացած, առաջարկում էր նորան իւր հետ խաղալ, հաստատ համոզուած լինելով, որ անպատճառ կը յաղթէ՝ այն ժամանակ «նորեկ» ծերունին աւելի ևս պինդ էր կապում նրա փողպատը, և պատանին կրկին քաղաքավարի էր դառնում, նստում էր քաղաքագլխի դիմաց և նրան սպառ-

նալիքներ անում: Մինչև այդ՝ Գրիւնվիգէլում համարեա ամեն երեկոյ կէս կոպէկով թուղթ էին խաղում. բայց անգլիացին յայտնեց, որ կէս կոպէկով խաղը իւր համար չնչին բան է: Նա ինքը միշտ մանէթներ և ոսկէ դրամներ էր վէր գալիս, և ասում էր որ ոչ ոք իւր հետ չէ կարող մրցել. վերադրուած խաղացողները ակամայ հաշտուած էին նրա հետ հէնց միայն այն պատճառով, որ նա ահագին գումարներ էր տանուլ տալիս: Այդ բանի համար ոչ ոք չէր խղճահարւում. աշխատում էին որքան կարելի է աւելի փող տանել նրանից: «2^է որ նա անգլիացի է, իսկ այդ անգլիացիները իրանք էլ չգիտեն, թէ ինչ անեն իրանց փողերը», ասում էին գրիւնվիգէլցիք և հանգիստ սրտով նրա փողերը դնում իրանց գրպանները:

Այս բոլորի շնորհիւ կարճ միջոցում «նորեկի» ազգականը ընդհանուր յարգանքին արժանացաւ: Գրիւնվիգէլում դեռ երբեք մի այդպիսի երիտասարդ չէին տեսել: Ճիշտն ասած՝ ըստ երևոյթին, նա բացի պարից ոչինչ չէր սովորել. լատիներէն և յունարէն լեզուները նրա համար, ինչպէս կասեն՝ չինական ալբուրեն էր: Մի անգամ քաղաքագլխի տանը երեկոյ ժամանակ երիտասարդները մի խաղ սարքեցին, պատանի անգլիացին, որ մասնակցում

էր՝ պէտք է մի բան զրէր, բայց բանից դուրս եկաւ, որ նա մինչև անգամ իւր սեփական անունը չգիտէր զրել: Աշխարհագրութեան մէջ էլ նա բոլորովին տշէտ էր. նրա համար ոչ մի նշանակութիւն չունէր գերմանական քաղաքը Փրանսիա տեղափոխել և կամ դանիականը Լեհաստան: Նա ոչինչ չէր կարդացել, ոչինչ չէր սովորել, և քահանան քանի քանի անգամ զուլսը շարժել էր այս երկտասարդի տղիտութեան վրայ: Քայց չնայելով այս բանին, բոլորը ինչ որ նա անում էր կամ խօսում՝ ամենքի աչքում հիանալի բան էր երևում, որովհետև նա չափազանց հաւատացած էր խօսում և միշտ կամենում էր ինքը իրաւացի լինել: «Սլոք արդէն ես լաւ գիտեմ», նա միշտ այսպէս էր վերջացնում իւր խօսքը: Չմեռն եկաւ, և պատանի անգլիացին երեւաց իւր ամբողջ փայլով: Ոչ մի երեկոյթ չէր կախանում առանց նրան: Երբ նա չէր լինում՝ ամենքը տխրում էին. խելօք մարդու խօսելիս համարեա ամենքը յօրանջում էին: Մինչդեռ, ընդհակառակը, երբ երկտասարդ անգլիացին սկսում էր գերմաներէն լեզուով կոտրտելով ամեն տեսակ լիմարութիւններ դուրս տալ՝ այն ժամանակ ամենքը լսելիք էին դառնում: Քանից դուրս եկաւ, որ այս զարմանալի երկտասարդը բանաստեղծ էլ էր:

Օր չէր անցնում, որ նա երեկոյեան յուշատետրը չհանէր զրպանից և հասարակութեան առաջ չկարդար մի քանի սօնէտներ. լիրաւի, գտնում էին մարդիկ, որ պնդում էին, թէ նրա բանաստեղծութիւններից մի քանիսը՝ վատ են, բոլորովին զուրկ են մտքից, իսկ ուրիշներն էլ ասում էին, որ այդ բանաստեղծութիւնները արդէն տպագրուած են եղել. բայց երկտասարդ անգլիացին այս խօսքերից ամենեւին չէր քաշուում, շարունակում էր կարդալ իւր շարադրութիւնները և միևնույն ժամանակ ներկայ եղողների ուշադրութիւնը դարձնում նրանց գեղեցկութեան վրայ ու ամեն անգամ արժանանում բարձր ծափահարութիւնների:

Քայց անգլիացու համար ամենից գլխաւոր տօնը Գրիւնվիդելի պարահանդէսներն էին: Ոչ ոք չէր կարողանում նրա պէս առանց յոգնելու երկար պարել: Ոչ ոք չէր կարողանում այնպէս փստահ և վայելուչ ոտիւններ անել՝ ինչպէս նա: Քեռին էլ նրան շատ լաւ էր հաղցնում և վերջին մօղայով, և թէև հագուստը նրա վրայ այնպէս էր լինում նառած, որ կարծես կախարանից կախած լինի՝ բայց և այնպէս ամենքը առում էին, որ նա շատ ու շատ գեղեցիկ է այդ շորերով: Չմոռանանք ասել, որ այս պարահանդէսների ժամանակ էլ տղամարդիկ շատ յա-

ճախ գանազան վիրաւորանքներ էին կրում նրանից: Առաջ միշտ քաղաքազուլուն էր բաց անում պարահանդէսը, իսկ քաղաքի նշանաւոր երիտասարդները կարգադրում էին պարերը. բայց այն օրից որ երիտասարդ անգլիացին յայտնուեց՝ ամեն բան ուրիշ ընթացք ստացաւ: Առանց երկար մտածելու՝ նա առաջին պատահած տիկնոջ հրաւիրում էր իւր հետ պարել. կանգնում էր նրա հետ միասին առաջին տեղում և սկսում էր պարել՝ ինչ որ ինքն էր կամենում և առհասարակ իրան այնպէս էր պահում, որ կարծես թէ պարահանդէսի կարգադրիչը կամ թագաւորը ինքը լինէր: Եւ որովհետեւ տիկիններին այդ բանը շատ էր դուր գալիս, ուստի տղամարդիկ ստիպուած զսպում էին իրանց բարկութիւնը առանց մի բան ասելու, իսկ անգլիացին ամեն տեղ շարունակում էր իւր կարգադրութիւնները, կարծես իրանց տանը լինէր:

Այս բոլորը ամենից աւելի ծերունի քեռուն էր ուրախացնում. նա երբէք աչքը սանից չէր հեռացնում և ամբողջ ժամանակ ժպիտը խաղում էր նրա շրթունքների վրայ: Իսկ երբ միւս հիւրերը մօտենում էին նորան, որ արտայայտեն իրանց հիացմունքը բարեկիրթ և ապագայի համար շատ խոստումներ տուող երիտասարդից՝ այն ժամանակ ծերունին գլուխը ուրախութիւ-

նից բոլորովին կորցրած՝ բարձրաձայն ծիծաղից քիչ էր մնում թէ մեռնէր: Բայց գրիւնվիզէլցիք ծերունու ուրախութեան այս մեծ արտայայտութիւնները վերագրում էին նրա դէպի իւր ազգականն ունեցած չափազանց մեծ սիրուն և այդ շատ բնական բան էին համարում:

Սակայն այնու ամենայնիւ նա դեռ ժամանակ առ ժամանակ իւր սանին հայրական խրատներ էր տալիս: Բայց զարմանալին այն է, որ երբեմն պարի ամենաթունդ միջոցին երիտասարդ անգլիացու խելքին փչում էր մի որևէ չար միտք, օրինակ նա մի յանդուգն ուստիւնով ցատկում էր հստրադի վրայ, ուր սովորաբար նրստում էին երաժիշտները, խլում էր կօնտրբասի ձեռքից աղեղը և սկսում ոչ թէ նուագել, այլ իսկ և իսկ սղոցել. կամ յանկարծ սկսում էր զլորուել և կամ ոտները դէպի վեր բարձրացրած՝ ձեռների վրայ պարել. այսպիսի դէպքերում քեռին սովորաբար նրան մի կողմն էր տանում, խիստ յանդիմանում և հէնց այստեղ էլ ձգում նրա փողպատը, որից յետոյ երիտասարդը նորից սկսում էր իրան լաւ պահել:

Անգլիացին հասարակութեան մէջ իրան ահա այսպէս էր պահում: Ինչպէս յայտնի է՝ վատ բարքերը աւելի արագ են իւրացնում մարդիկ, քան թէ լաւերը. ամեն մի նոր, աչքի-

ընկնող ձև, ինչքան էլ ծաղրելի է լինում՝ բայց և այսպէս իւր մէջ մի ինչ-որ գրաւիչ բան է ունենում այն ջահէլներին համար, որոնք դեռ սովոր չեն ինքնուրոյն դատելու: Անգլիացու շնորհիւ նոյնը պատահեց նաև Գրիւնվիդելում: Երբ տեղացի երիտասարդները տեսան, թէ նա իւր տձև մարմնով, կոպիտ ծիծաղով և շատախօսութեամբ ոչ միայն ոչ ոքի նախատինքին չէ արժանանում, այլ դեռ գովասանքներ էլ է ստանում և որ նրա արած բոլոր լիմարութիւնները համարում են սրամիտ և ինքնուրոյն գործեր՝ սկսեցին նոյնպէս մտածել. «այս բաները մենք էլ կարող ենք անել և դեռ նրանից էլ աւելի լաւ»: Նրանք բոլորն էլ աշխատասէր և լաւ բաներով հետաքրքրուող երիտասարդներ էին, իսկ այժմ այսպէս էին դատում. «Մեր ինչի՞ն է պէտք գիտութիւնը, երբ մինչև անգամ անկիրթ լինելով էլ կարելի է յաջողութիւն ունենալ»: Նրանք գէշ շալտեցին իրանց գրքերն և սկսեցին անգործ շրջել փողոցներում ու հրապարակներում:

Առաջ նրանք ամենքի հետ քաղաքավար և սիրալիր կերպով էին վարում, խօսում էին այն ժամանակ՝ երբ նրանց դիմում էին մի որևէ հարցով և միշտ էլ պատասխանում էին համեստ ու խոհեմ կերպով: Իսկ այժմ նրանք

միշտ խառնուում էին մեծերի խօսակցութեան մէջ, բարձրաձայն խօսում և արտայայտում էին իրանց կարծիքը, ծիծաղում էին մինչև անգամ քաղաքացիի երեսին՝ երբ նա մի որևէ բան էր ասում՝ և ինքնահաւանութեամբ պնդում էին, որ իրանք ամեն ինչ գիտեն և գիտեն ուրիշներին շատ և շատ լաւ: Առաջ երիտասարդ գրիւնվիդելցիք ատում էին այն բոլորը՝ ինչ որ կոպիտ է և անվայել. իսկ այժմ նրանք էլ էին դանազան անվայել երգեր երգում, ծխում և պանդուկներ յաճախում: Նրանք էլ գնեցին իրանց համար մեծ-մեծ ակնոցներ, չնայելով որ դեռ լաւ տեսողութիւն ունէին. բայց կարծում էին, թէ ակնոցներով շատ ու շատ հետաքրքրական պէտք է լինէին. չէ՞ որ դրանով նրանք կնմանէին նշանաւոր անգլիացուն: Տանը թէ հիւր եղած ժամանակ՝ երիտասարդ գրիւնվիդելցիք չէին քաշուում ոտները զահաւորակի վրայ գնել, շատ անգամ էլ մեկնում էին բազկաթուռների մէջ կամ օրօրում աթուռների վրայ, միշտ արմուկները սեղանին կոթնած, իրանց երեսը յենում էին ձեռների վրայ — մի խօսքով շատ անտանելի կերպով էին պահում իրանց: Իգուր էին մայրերն ու բարեկամները նկատում, որ նրանց արածները լիմար և անվայել բաներ են, որդիքը, պատասխանի փոխարէն՝ անգլիա-

ցուն էին ցոյց տալիս: Ի զուր էին մեծերն ապացուցանում, որ այդ կոպտութիւնը անդլիացու բնածին յատկութիւնն է, ուստի և ներելի: սակայն երիտասարդ գրիւնվիդէլցիք պնդում էին, որ իրանք էլ ոչ պակաս իրաւունք ունին սրամիտ կոպտութիւններ անելու: Մի խօսքով՝ ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս Գրիւնվիդէլում, ծերունու սանի շնորհիւ՝ բարի բարքերն ու սովորութիւնները փոքր առ փոքր փչանում էին: Բայց երիտասարդութիւնը երկար չվալեցեց այս ազատութիւնը: Հետեւեալ դէպքը յանկարծակի փոխեց իրերի դրութիւնը:

Ձմեռնային զուարճութիւնները վերջանալու վրայ էին, և նրանց վերջ պէտք է դնուէր երաժշտական մի մեծ երեկոյթով, որին խոստացան մասնակցել թէ՛ քաղաքային նուազախումբը և թէ՛ Գրիւնվիդէլում երաժշտութիւն սիրող մի քանի անձինք: Քաղաքապետը ղիտէր շատ լաւ ածել վիօլօնչէլի վրայ, բժիշկը՝ ֆագօտի, իսկ դեղագործը՝ ֆլէյտի, թէև երբեմն սխալում էլ էր: Մի քանի օրիորդներ սովորեցին արիաներ երգել—մի խօսքով ամեն ինչ շատ լաւ կարգադրուած էր: Բայց մի օր յանկարծ ծերունի քեռին յայտնեց, որ թէև երեկոյթը, ըստ երևոյթին, հետաքրքրական պէտք է լինի, բայց ափսոս որ դուէտ չկայ, և որ լաւ

կազմուած երաժշտական երեկոյթները երբէք առանց դուէտի չեն լինում: Այս խօսքերը մասնակցողներին մի փոքր շփոթեցրին:

Քաղաքապետի աղջիկը, ճիշտ է, կատարեալ սոխակի պէս էր երգում. բայց ռոտեղ գտնէին և մի երիտասարդ, որ կարողանար նրա հետ դուէտ երգել: Մէկը մատնացոյց արաւ մի ծեր երաժշտի վրայ, որ երբեմն նշանաւոր բաս էր. բայց «նորեկը» յայտնեց, որ իզուր են դէս ու դէն ընկնում, քանի որ իւր ազգականը հիանալի երգել զիտէ: ✓ A.

Ամենքը մնացին զարմացած, երբ իմացան, որ երիտասարդ անգլիացին դեռ մի ուրիշ տաղանդ էլ ունի: Փորձի համար մի բան երգել տուին, և բացի մի քանի պակասութիւններից, որ նրա անգլիական ծագումով բացատրուեցան՝ յայտնուեց, որ նա հրեշտակի պէս է երգում: Դուէտը սովորելու համար սկսեցին փորձեր անել, և վերջապէս հասաւ երեկոյթի օրը, երբ գրիւնվիդէլցիների լսելիքը պէտք է հրճուէր հրաշալի նուագներով:

Անդ, իսեղճ քեռին չկարողացաւ վկայ լինել ազգականի այդ մեծ տօնին: Ծերունին այդ օրը հիւանդացաւ և ստիպուած էր պառկել, սակայն այնու ամենայնիւ նա չմոռացաւ իւր սանի վերաբերութեամբ մի քանի անհրաժեշտ

խրատներ տալ քաղաքագլխին, որ երեկոյթից մի ժամ առաջ եկել էր հիւանդին այցելելու:

— Քրոջս որդին շատ լաւ տղայ է, — ասաց ծերունին քաղաքագլխին, — բայց ժամանակ առ ժամանակ նա ընկնում է մի տեսակ անհասկանալի տրամադրութեան մէջ և սկսում է զանազան լիմարութիւններ անել: Ահա ինչո՞ւ ես աւելի ևս ափսոսում եմ, որ չեմ կարող երե ոյթին ներկայ լինել: Նա միայն ինձնից է մի փոքր վախենում — մենք գիտենք, թէ ինչու. — սակայն ի պատիւ նրա պէտք է ասեմ, որ այս օտարոտի արարքները առաջ են գալիս ոչ թէ բարոյապէս փչացած լինելուց՝ այլ Ֆիզիքապէս հիւանդ դրութիւնից: Սա արդէն նրա կազմի մէջ է: Ուստի խնդրում եմ ձեզ, պարոն քաղաքագլուխ, երբ իմ տանը կսկսի նորից իւր լիմարութիւնները, օրինակ, երբ յանկարծ նրա խելքին փչէ պիւպիտրի վրայ բարձրանալ, կամ կօնդրբասի ձեռքից առնել գործիքը և նուագել՝ այն ժամանակ, բարի եղէք, մի փոքր թուլացրէք նրա փողպատը, իսկ եթէ այդ չօգնէ՝ բոլորովին հանեցէք: Յետոյ արդէն կտեսնէք, թէ նա ինչպէս կսկսի իրան հեզ և բարեկիրթ պահել:

Քաղաքագլուխը շնորհակալութիւն յայտնեց հիւանդին դէպի ինքը ունեցած այդպիսի

վստահութեան համար և խոստացաւ կատարել ծերունու բոլոր ասածները:

Երեկոյթի օրը դահլիճում ասեղ զգելու տեղ չկար. ներկայ էին ոչ միայն քաղաքացիք, այլ և երեք մղոն շրջակայքից եկել էին բոլոր որսորդները, քահանաները, ծառայողներն ու կալուածատէրերը՝ իրանց բազմաթիւ ընտանիքներով:

Գրիւնվիդէյցիների հետ միասին նրանք ևս ցանկացան հրճուել այս հազուագիւտ երեկոյթով: Քաղաքային նուագախումբը շատ հիանալի նուագեց. լետոյ դուքս եկաւ քաղաքագլուխը և Ֆլէյտի ներդաշնակութեամբ ածեց վիօլօնչելի վրայ: Ապա ծերունի բասը մեծ յաջողութեամբ երգեց մի արիա, իսկ բժիշկը նուագեց Փագօտի վրայ և նոյնպէս արժանացաւ բուռն ծափահարութիւնների: Երեկոյթի առաջին մասը վերջացաւ: Ամենքն անհամբերութեամբ սպասում էին երկրորդ մասին, երբ պատանի անգլիացին և քաղաքագլխի աղջիկը երկուսով դուէտ պէտք է երգէին:

Անգլիացին այդ օրը հազնուած էր շատ ճաշակով և արդէն վաղուց էր իւր վերայ դարձրել ամենքի ուշադրութիւնը: Առանց որևէ մէկից հարցնելու՝ նա պառկեց մի փափուկ բազկաթոռի մէջ, որ պատրաստուած էր մի դքսու-

Հու համար, (դքսուհին պէտք է զար Գրիւն-
վիգէլի շրջակայքից), շփեց ոտները և սկսեց
նայել հասարակութեան վերայ ակնոցների մի-
ջից մի ահագին դիտակով. նա միևնոյն ժամա-
նակ խաղում էր մի մեծ շան հետ, որին հետը դահ-
լիճ էր բերել, չնայելով որ այդ թոյլ չէր տրուում:
Իսկ երբ դքսուհին եկաւ՝ նա ոչ միայն վեր
չկացաւ նրա տեղից, այլ ընդհակառակը, դեռ
աւելի ևս հանգիստ տեղաւորուեց նրա մէջ, և
ոչ ոք չհամարձակուեց նորան նկատողութիւն
անել: Ուստի դքսուհին պէտք է բաւականա-
նար մի հասարակ աթոռով և նստէր քաղա-
քացի միւս տիկիւնների կողքին, թէև այս նրա
համար մի շատ տհաճ բան էր: Քաղաքացիի
հրաշայլ խաղի և ծեր երաժշտի սքանչելի ա-
րիայի ժամանակ, մինչև անգամ այն միջոցին,
երբ բժիշկը, փոխանակ ածելու ֆազօտի վրայ,
իրանից շարադրում էր, և ամենքը շունչը բռնած
լսում էին՝ դարձեալ պատանի անգլիացին ի-
րան պահում էր ամենաանքաղաքավար կեր-
պով. նա կամ ստիպում էր շանը թաշկինակը
բերել և կամ ինքը բարձրաձայն խօսում էր իւր
մօտ նստած անձանց հետ, այնպէս որ ո՛վ նը-
րան չէր ճանաչում՝ զարմացած լետ էր դառնում
և նայում այդ տարօրինակ երիտասարդի վրայ:
Հասկանալի է, թէ ինչ անհամբերութեամբ

բոլորն սպասում էին դուէտը լսելուն: Երեկոյթի
երկրորդ մասն սկսուեց. նուագախումբը նուա-
գեց մի փոքրիկ պիէս, յետոյ քաղաքացիւիւր
իւր աղջկայ հետ մօտեցաւ ջահէլ երիտասարդին,
տուեց նորան նօտաները ու ասաց. «պարոն, հա-
ճեցէք այժմ դուէտում երգել»: Երիտասարդ ան-
գլիացին ծիծաղեց, ատամները բաց արաւ, վեր
թռաւ տեղից, մօտեցաւ պիւպիտրին և կան-
գնեց նրա առաջ: Քաղաքացիւին ու նրա աղ-
ջիկը հետևեցին պատանի անգլիացուն: Ամենքն
էլ ականջները սրեցին: Երաժիշտը չափը որո-
շեց և նշան արաւ, որ սկսեն. անգլիացին նայ-
եց նօտաներին և, փոխանակ երգելու, լանկարծ
սարսափելի ձայներ սկսեց հանել: «Յաճ, յար-
գելի պարոն, երկու նօտա ցած վերցրէք. դուք
պէտք է Շ-ից սկսէք, — զոչեց երաժիշտը:

Բայց փոխանակ Շ-ից սկսելու՝ նա հանեց
կօշիկներից մէկը և խփեց երաժշտի գլխին,
այնպէս որ խեղճի մազերի վրայից պուգբը ցրել
եկաւ: Այս տեսնելուն պէս՝ քաղաքացիւիւր մը-
տածեց. «էհէ՛, նրա ցաւը դարձեալ բռնեց», —
և շտապով թուլացրեց նրա փողպատը: Բայց
երիտասարդի գրութիւնը ոչ միայն չլաւացաւ,
այլ աւելի ևս վատացաւ. նա այդ միջոցին գեր-
մաներէն չէր խօսում, այլ մի ինչ-որ անհաս-
կանալի լեզուով բաներ էր ասում և վազվզում

դաճիւիծում: Այս անհաճոյ ընդհատումը վատ ազդեց քաղաքագլխի վրայ. նա, երկիւղ կրելով, թէ երիտասարդին մի որևէ անսովոր բան է պատահել՝ վճռեց շուտով բոլորովին բաց անել նրա փողպատը՝ ինչպէս պատուիրել էր ծերունին: Բաց անելիս՝ զարմանքից մնաց քարացած, երբ տեսաւ ջահէլ մարդու վիզն ամբողջապէս ծածկուած մուգ կինամոխսագոյն մազերով: Փողպատը հանելուց յետոյ, պատանի անգլիացին, փոխանակ հանգստանալու՝ աւելի ևս մեծ մոլեգնութեամբ՝ սկսեց վազվզել և ցատկոտել դաճիւիծում:

Նա կատաղութեամբ բռնում էր իւր մազերը և քաշկռտում, և զարմանալի՝ բան—նրա զեղեցիկ զանգուր մազերը կեղծ էին. նա այդ մազերը հանեց և շարտեց քաղաքագլխի երեսին: Գլուխն էլ նոյնպէս ծածկուած էր նոյն տեսակ մազերով: Ապա նա սկսեց վազվզել աթոռների վրայով, պիւպիտրը վայր գցեց, ջութակն ու կլարնէտը կոտրտեց և կատաղած զազանի պէս սկսեց ամեն բան տակն ու վրայ անել: «Բռնեցէք, բռնեցէք, — սաստիկ բարկացած գոռում էր քաղաքագլուխը. — նա խելագարուել է, շուտ բռնեցէք»: Բայց նրան բռնելը այնքան էլ հեշտ բան չէր, որովհետեւ այս անգամ նա հանել էր

ձեռնոցները և անգութ կերպով ճանկռում էր՝ ով որ փորձում էր մօտենալ իրան:

Ձեռնոցները մինչև այժմ ծածկելիս են եղել նրա սուր ճանկերը հասարակութեան աչքից: Վերջապէս մի քաջասիրտ որսորդ կարողացաւ նրան բռնել: Որսորդը այնպէս սաստիկ սեղմեց նրա երկար ձեռները, որ խեղճը հազիւ կարողացաւ ոտները շարժել, և մի խուպոտ ձայն արձակեց: Հասարակութիւնը սիրտ առաւ. շրջապատեց նրան և զարմանքով սկսեց նայել պատանի անգլիացու վրայ, որ այժմ մարդկային ոչինչ չունէր: Հիւրերի թւում պատահմամբ մի գիտնական էլ կար. նա ապրում էր Գրինսվիլդէլի շրջակայքում և մի մեծ սենեակ լիքը հազուադիւս բաներ ունէր, ի թիւս որոց նաև շատ կենդանիների և զազանների խրտուիլակներ: Նա մօտեցաւ արդէն կապկպած ջահէլ մարդուն, ուշադրութեամբ նայեց-նայեց նրա վրայ և գոչեց.

— Աստուած իմ, ինչպէս կարող էիք դուք, պարոններ, թող տալ այս զազանին մի այսպիսի պատուելի հասարակութեան մէջ մտնել: Սա *Homo troglodytes Linnaei* կոչուած կապիկներիցն է: Ես այս բոպէիս պատրաստ եմ վեց տալէր վճարել՝ եթէ դուք համաձայնէք նրան ինձ տալ:

Ո՞վ կարող է նկարագրել գրինսվիլդէլցիների

զարմանքը, երբ լսեցին գիտնականի այս խօսքերը:

— Ի՞նչպէս, օրանդ-ուտանդ կապիկը մեք հասարակութեան անդամ. ի՞նչպէս, այս օտարականը ոչ այլ ոք է, եթէ ոչ մի կապիկ: Անկարելի բան է... գոչում էին ամենքը և նայում միմեանց երեսին:

Ոչ ոք չէր ուզում հաւատալ ականջներին:

Տղամարդիկ ուշադրութեամբ նայում էին պատանի անգլիացուն, բայց աւաղ, նա այժմ մի իսկական կապիկ էր՝ ինչպէս որ էր առաջ էլ:

— Սակայն ի՞նչպէս կարելի է,— գոչում էր քաղաքագլխի կինը— միթէ սա էր որ յաճախ ինձ մօտ կարգում էր իւր բանաստեղծութիւնները: Միթէ սա էր, որ ուրիշների հետ միասին քանի քանի անգամ ճաշել է ինձ մօտ:

— Ի՞նչպէս, — ասում էր զարմացած բժշկի կինը. — միթէ այս կապիկն էր ինձ մօտ յաճախ սուրճի մնում, մարդուս հետ գիտնական գրոցներ անում, ծխում:

— Անկարելի բան է, կրկնում էին տղամարդիկ. — չէ՞ որ նա մեզ հետ կեցիլ էր խաղում և վիճում քաղաքական հարցերի մասին:

— Ի՞նչպէս, — զանգատուում էին ամենքը. — միթէ սա էր, որ միշտ մեր պարահանդէսների ժամանակ պարերն սկսում էր... Կապիկ, անկարելի է. սա հրաշք է, սա մի կախարդութիւն է:

— Այո՛, սա կախարդական, սատանայական մի գործ է, — ասաց քաղաքագլուխը՝ ցոյց տալով փողպատը:

— Տեսէ՛ք, սրա մէջ է այն կախարդութիւնը, որ նրան մեր աչքում գրաւիչ էր դարձնում: Փողպատին կարած էր մի լայն մագաղաթի կտոր, որի վրա զանազան օտարոտի նշաններով բաներ էր գրուած. կարծեմ սա լատիներէն պէտք է լինի: Պարոններ, ձեզնից ո՞վ կարող է կարգալ, հարցրեց քաղաքագլուխը:

Քահանան, որ ուսումնական մարդ էր և յաճախ անգլիացու հետ շախմատ էր խաղացել և մեծ մասամբ վաստակել մեծ-մեծ գումարներ՝ մօտեցաւ քաղաքագլխին նայեց մագաղաթի վրայ և ասաց.

— Սրա կարգալը դժուար չէ, միայն տառերն են լատիներէն, իսկ ահա թէ ի՞նչ է բովանդակութիւնը. — «կապիկը շատ ուշատ գուարճալի է լինում՝ երբ արգելուած պտուղի համը չէ առնում:»

— Այո՛, այս սատանայական խաբէութիւնը նոյնպէս կախարդութիւն է, աւելացրեց քահանան, և արժանի է մի լաւ պատժի, որ օրինակ լինի ուրիշների համար, ասաց քահանան:

Քաղաքագլուխը, որ նոյնպէս միւսնոյն կար-

ծիքին էր¹ խկոյն ուղևորուեց ծերունու բնակարանը:

Ամենքը արդէն ծերունուն կախարդ էին համարում: Աեց հոգի, կապիկը հետները, գնացին քաղաքագլխի հետ, որպէս զի բոլորի ներկայութեամբ ծերունուն հարցումիորձի ենթարկէին:

Մինչ այս մինչ այն՝ դատարկ տան առաջ ահագին բազմութիւն հաւաքուեց. ամենքը հետաքրքիր էին, թէ բանը ինչով կրկերջանայ: Եկողները առաջ ծեծեցին տան դուռը, յետոյ դանդը քաշեցին, բայց իզուր — ոչ ոք չերևաց: Այն ժամանակ քաղաքագլուխը, սաստիկ բարկացած՝ հրամայեց դուռը կտրել, և ուղիղ մտաւ տանտիրոջ սենեակը: Բայց այնտեղ ոչ մարդ կար և ոչ էլ մի աչքի ընկնող առարկայ, բացի մի քանի հին-ու-մին բաներից: Տան մէջ ոչ մի տեղ չկարողացան ծերունուն գտնել: Յանկարծ նրա աշխատութեան սեղանի վրայ մի փակ ծրարով նամակ տեսան, որի վրայ գրած էր քաղաքագլխի հասցէն:

Աերջինս շտապով բաց արաւ նամակը և կարդաց հետեւեալ տողերը.

«Իմ սիրելի գրիւնվիդէլցիք.

Երբ դուք այս տողերը կարդալիս կլինէք՝ ես արդէն ձեր քաղաքում չեմ լինի. սակայն դուք արդէն իմացած կլինէք իմ սիրե-

լի ազգականի ծագումն ու հայրենիքը: Թող այս կտասկը, որ ես ինձ թոյլ տուի ձեր վերաբերութեամբ՝ ձեզ համար լաւ դաս լինի, որպէսզի այսուհետեւ ոչ ոքի չստիպէք՝ ձեր հասարակութեան մէջ մտնելու: Ես իմ արժանաւորութիւնից ստոր բան էի համարում մասնակցել ձեր անվերջ բամբասանքներին և հետեւել ձեր անպատակ կեանքի ծաղրալի ձևին: Ուստի ես կրթեցի մի ջահէլ օրանդ-ուտանդ, որ փոխարինեց ինձ ձեզ համար և որին դուք այդչափ սիրեցիք: Մնաք բարեաւ. աշխատեցէք որքան կրելի է շատ օգտուել այս գասից»:

Երկար և շատ երկար ժամանակ գրիւնվիդէլցիք չէին կարողանում մոռանալ այս խալտառակութիւնը: Բայց ամենից աւելի ամաչում էին Գրիւնվիդէլի երիտասարդները, որ ամեն բանի մէջ ձգտում էին կապիկին նմանուել:

Փոքր ժամանակից յետոյ նրանք նորից բարեկիրթ և վայելուչ մարդիկ դարձան: Եւ եթէ պատահում էր, որ մէկը նորից ընտելանում էր վատ և ծաղրալի կենցաղի՝ այն ժամանակ գրիւնվիդէլցիք նրան «կապիկ» էին անուանում: Իսկ օրանդ-ուտանդը, որ այնքան ժամանակ իբր պատանի անգլիացի էր ներկայացել՝ այժմ գտնուում է այն գիտնականի հայրու-զիւտ իրերի թւում: Դիտնականը կերակրում է

նրան, որոց է տալիս ամեն մի նորեկի, թող
է տալիս այդ կենդանուն զբօսնել բակում, ուր
նրան այսօր էլ կարելի է տեսնել:



1415

2013

